

Բ. ԽԱԼԱԹԵԱՆՑ.

# ՏԵՍՆԻՒՆԵԲՈՐԴ ԳՅՐԻ

## ԿՏԱԿԱԸ

Սիրեցիք զմիմեանո  
Աւտաբան.



Թ. հ. Փ. Լ. Խ. Ս.  
Արտգ. տպար. Մ. Մարտիրոսյանցի  
Միքայէլիան փողոց, տուն № 81.

1899.

ԱԿՐԵԲ

1525

2013.4.



5 OCT 2011

ԱՐԻՔ  
1525  
աւ


Բ. ԽԱՆՉԵՏԱՆՑ.

# ՏԵՍՆԻՆՆԵՐՈՒԹ ԴԱՅԻ

## ԿՏԱԿԸ

319

Սիրեցէք զմիմետնո-  
Աւատաբան.




Թ. Ի. ՓԼԻՍ  
Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի  
Միքայէլեան փողոց, տուն № 81.  
**1899.**

## ՏԱՄՆԻՆԵՐՈՐԴԻ ԴԱՐԻ ԿՏԱԿԸ.

Սկզբանու գմիմեանս  
Աւտորան.

Дозволено цензурою. Тифлисъ, 5 июля 1899 г.



1525-2013  
հ. 8. 1578

(45-37  
44 8)

1899 թուականի հետ զլուռում է մի ամբողջ դար մարդկային մտաւոր և քաղաքական կեանքի, գառնում մեզ համար անցեալ՝ պահպանելով իւր պատմական նշանակութիւնը։ Այս թուականի վախճանի հետ ծնւռում է մի նոր դար, իւր նոր պահանջներով, ուրեմն և մարդկութեան համար զործունէութեան նոր ասպարէզներով, կուլտուրական զարգացման նոր արդիւնքներով։

Հարիբւր տարի... Ո՞րքան խոշոր է թուում այդ թիւը մեր աչքում, եթի համեմատում ենք մեր սահմանափակ կեանքի տարիիների հետ։ Եւ յիրաւի, այդքան տարիիների ընթացքում առաջ են զալիս այնպիսի երևոյթներ, որոնք ընդարձակում են մարդկային ազգի մտաւոր հորիզոնը, լայն ծաւալ տալիս նորա պատմութեանը։ Եւ եթէ յիրաւացի է այդ ասել ամեն

մի հարիւրամեակի մասին, առաւել ևս իրաւացի է նոյնը պնդել մեր գարի վերաբերմամբ, որ զարմանալի հարուստ է և՛ քաղաքական, և՛ հասարակական, և՛ մտաւոր կեանքի խոշոր երևոյթներով:

Պատմական գիտութիւնն ասպարէզ է հանել այստեղ և մշակել այնպիսի խնդիրներ, որոնք հարիւր տարի առաջ անկարող էին երեան գալ այդ գիտութեան չքաւորութեան պատճառով։ Ճոխացաւ և աւելի լայն ընթացք ստացաւ նա այն ժամանակից, երբ հարստացան նորա աղբիւրները, երբ հանդէս եկան և ստացան կանոնաւոր կազմակերպութիւն մի շարք նոր գիտութիւններ՝ ազգագիտութիւն, համեմատական լեզուագիտութիւն, մարդաբանութիւն, հնախօսութիւն և այլն, որոնք՝ մերթ համեմատելով զանազան ազգերի լեզուն, աւանդութիւնները, սովորութիւնները, մարմնի կազմակերպութիւնը՝ մերթ խորասուզուելով գետնի մէջ, բաց անելով հնոց գամբարանները, նոցա գործունէութեան հետքերը՝ հարթեցին պատմութեան ճանապարհը։ Հնութեան փոշու տակից, դագաղներից, պիրամիզների խորշերից յարութիւն առան այնպիսի ազգեր, որոնց գոյութեան մասին սակաւ կամ քնաւ

ոչինչ չգիտէին մեզանից մի քանի տասնեակ տարի առաջ, իսկ այժմ՝ նորա մեր առաջ կամոցնած են իրանց կուլտուրական զարգացման որոշ աստիճաններով սկսեալ հաւատքից մինչև ընտանեկան կենցաղը։

Ֆիզիքական և մաթեմաթիքական գիտութիւններն այնպիսի յառաջագիմութիւններ արին մեր գարում, այնպիսի գիւրութիւններ ստեղծեցին մեր առօրեայ կեանքի և գործունէութեան համար, որ ամենայն իրաւամբ արծանի են բռնելու առաջին տեղը։ Մի շարք նոր գիւտեր կատարեալ յեղափոխութիւն ձգեցին մեր տնտեսական (էքսոնոմիքական) կեանքում, զօրեղ զարկ տուին արուեստների զարգացման, մօտեցրին հեռաւոր երկրներ, դիւրացրին զանազան ազգերի հաղորդակցութիւնը, հարթելով ամեն տեսակ խոշնեղութներ՝ մերթ ծակելով լեռների զդժաները, մերթ ծովը ճեղքելով, մերթ ընկզմելով մինչև նորա յատակը։ Այն, որով մի ժամանակ հեքեախթներում միայն կարելի էր շյել միտքը, այժմ իրագործւում է մեր աչքի առջեւ։

Խանոնիճաղանձ քաղաքական գրութիւնը, որի մէջ ծնուեցաւ մեր գարը և որ ստեղծուել էր մի մարդու հզօր կամքով, թէպէտե վերջա-

ցաւ, բայց արիմահեղ պատերազմները շարունակ դղրդեցնում էին Եւրոպան մի ծայրից միւսը՝ մինչև դարուս վերջին քառորդը։ Այդ պատերազմների գլխաւոր արդինքն այն եղաւ, որ մի քանի ազգութիւններ (Խտալացիք, Գերմանացիք, Բալկանեան թերակղզու Սլաւոն աղգերը) ստացան իրանց որոշ քաղաքական կազմակերպութիւնը, ձուլուեցին ու անկախ տէրութիւններ կազմեցին՝ մասնակից լինելով այնուհետև Եւրոպական քաղաքական կեանքին։

Համայնական շարժումն այնպիսի ծաւալ ստացաւ մեր օրերում, որ գրաւեց ոչ միայն Եւրոպական կառավարութիւնների լուրջ ուշադրութիւնը, այլ և գիտնականների հետաքրքրութիւնը, դարձաւ ուսումնասիրութեան առարկայ, իրքի մի նոր ծնունդ, որ իւր ծննդեան մէջ արդէն զօրեղ է։

Ահա թէ ինչ է աւանդում տասնիններորդ դարը քսաներորդին՝ մի ժառանգութիւնն, որ իւր մէջ կրում է բարձրագոյն քաղաքակրթութեան սերմերը։

Բայց սորա հետ քսաներորդ դարը ժառանգում է և մի ինդիք, որ երբէք հաշտ չէ եղել մեր քրիստոնէական իդէալների հետ, երկար ժամանակ խանգարել է մեր բարոյական կեան-

քի ներդաշնակութիւնը և որի լուծումը մնում է ապազայ սերնդի խզմի վրայ։ Դա պատերազմների գոյութիւնն է մեր լուսաւոր դարում։ Այն մրցումը, որ միշտ և ամեն տեղ եղել է մեր կուլտուրական զարգացման գլխաւոր գործոնը՝ քաղաքական ասպարիզում տուեց այնպիսի արդինքներ, որոնք հարկաւ միշտ պիտի լինին լուսաւոր ազգերի ընդհարումների պատճառ։

Կարիք կայ արգեօք յիշեցնելու, որ սպատերազմի գոյութիւնը մեր ժամանակ կատարեալ անաքրոնիզմը է՝ ամենահաստատ փաստը, որ ոչ քրիստոնէական հայեացըն է իշխում մարդուս վերայ, որի կեանքը զո՞ն է բերում շահախընդիր նպատակների և ձգտումների, դարիս գլխաւոր շարժառիթների։ Կըքերը, որոնցով առաջնորդում են պատերազմող կողմերը, անշուշտ նոցա ստորին, անասնական բնութեան արգասիքն են, որ այն աստիճան կուրացնում են հոգևոր տեսութիւնը, մինչ արեան ճապաղիքը, գոսացած գիտների տեսքը, վիրաւորների մրմունջները, յուսահատական ազաղակները և աղաշանիքները նոյնքան քիչ են ներգործում նոցա բթացած զգերի՝ որքան գիշատիչ արիւնարբու զաղանների վերայ։

Եթէ ալլակրօնների դէմ մղած պատերազմները կարելի լինէր իսկ արդարացնել քրիստոնէական և, ինչպէս վերջերս լինում է, կուլտուրական իդէանների մրցումով, ապա ինչպէս քայատրել կամ արդարացնել քրիստոնեայ աղգերի մէջ ծագած պատերազմները՝ այն աղգերի, որոնք կուլտուրական գարգացման նոյն բարձր աստիճանի վերայ են կանգնած՝ ովկուրուած նոյն գաղափարներով և նոյն բարոյական ձգտումներով, երկրպագով նոյն ճշմարիտ վարդապետութեան։ Նիւթական բարիքներն ամեն ինչ մոռացնել են տալիս. իրար դէմ ճակատողներին զեկավարում է միայն մի բաղձանք՝ մերձաւորի արեան գնով, նորա գոյութեան աղքիւրները ոչնչացնելով գնել իրանց բաղդաւորութիւնը, գոհացում տալ իրանց աղգային ինքնասիրութեանը. Այս վերջին ձգտումը նոր և ամենանոր ժամանակների պատմութեան մէջ շատ անգամ եղիլ է մեծ շարիքների աղբիւր։ Որշափ քրիստոնեայ աղգերն ամենակուլտուրական, հարկաւ և ամենաուժեղ աղգերն են հանդիսանում մեր հողագնոթի վերայ՝ նոյնշափ առաւել կործանիչ է լինում նոցա գորութիւնը պատերազմներում, առաւել սոսկալի աւերման և մարդկային սպանդանոցի այն

պատկերը, որի առջև մենք սարսափում ենք և փակում մեր աչքերը։

Ճշմարիտ է, այս տեսակ երկոյթները, անցիշելի ժամանակներից ի վեր արմատանալով աղգերի պատմական կեանքի մէջ, դարձել են մի տեսակ կենսական խնդիր, մարդկանց յարաբերութիւնները պահպանելու համար ստեղծուած մի շարիք։ Բայց եթէ ներելի էր հոռվայեցուն՝ այն էլ զեռ ևս կոպիտ բարքերի դարերում՝ սրով և հրով տարածել իւր տիրապետութիւնն ուրիշ աղգերի սահմաններում, եթէ ազնւութեան գործ էր նորա համար շառաշել նիգակով և կեանքը գոհելով սլաշտպանել իւր բարձր քաղաքակրթութիւնը բարբարոսների արշաւանքից, մենք, երբ մեր քաղաքները լի են անհամար փառահեղ եկեղեցիներով, երբ լիստ դատավճիռ է կարդացում մարդկանց անարդարութեան դէմ գիտութեան և գրականութեան մէջ, հասարակական կեանքում և դատաստանի առաջ, մենք պէտք է խոստովանինք, որ շատ հեռու չենք գնացել այն աղգերից, որոնք մարդիկ էին ողակիկում և փառաբանական շարականներ երգում իրանց ձեռքով հրդեհած թշնամու մայրաքաղաքի լուսով։

Թափառական փիլիսոփայութիւնն առհաս-  
սարակ արդարացնում է պատերազմը, իբրև  
մի «անխուսափելի չարիք»—և շատերը նոյնը  
կրկնում են, կարծես առանց զգալու, որ դո-  
րանով անողորմ դատավճիռ են կարդում մեր  
ժամանակի գլխին։ Եւազակութեան և սպա-  
նութեան դէպքերը նմանապէս իրանց տեսակի  
«անխուսափելի չարիք» են. այնուամենայնիւ  
քաղաքակիրթ ազգերի մէջ դոցա դէմ ամենա-  
խիստ միջացներ են ձեռք առնուում։ Մենք չենք  
ուրանում հարկաւ, որ մարդկութեան ներկայ  
վիճակում լինում են դէպքեր, երբ պատերազմն  
անխուսափելի է դառնում, երբ ամենախաղա-  
ղասէր իշխաններն անգամ ստիպուած են լի-  
նում գէնք բարձրացնել արդարութեան դատը  
պաշտպանելու համար. բաւական է յիշել, ինչ-  
պէս ռուսաց մեծահօգի Կայսրը Թիւրքիայի  
ժանիքից խլեց արիմնուայ Բուլղարիան, ազատ-  
կեանք և պատուի իրաւոնք պարզելով հա-  
զարաւոր ստրկացած ընտանիքներին։ Բայց  
մեր խօսքն ընդհանուր սկզբունքի մասին է:  
Դարիս վերջին խաղաղ, բայց իւր օրինա-  
կով միծ անցքերից մէկն ապացուցանուա՞ է,  
որ հնարաւոր է զինուած ընդհարումների ա-  
ռաջն առնել. 1897 թուի երկու քրիստոնեայ

մեծ տէրութիւնների (Անգլիայի և Միացեալ-  
նահանգների) մէջ կայացած դաշնադրութիւնը  
ցոյց տուեց, որ վիճելի խնդիրների խաղաղ  
լուծումը հնարաւոր է, և այդ կարող է օրինակ  
տալ միւս պետութիւններին՝ փոխազարձ համա-  
ձայնութեամբ մեծամեծ ազէտների առաջն առ-  
նելու. մանհաւանդ որ հին առածը vae victis  
(վայ յաղթուածներին) չէ ունեցել երբէք այն  
ահուելի նշանակութիւնը, ինչպէս մեր ժամա-  
նակ։

Ուստի և անցեալ թուականին՝ նախ քան  
թնդանօթի առաջին որոտը խզեց Եւրոպայի  
խաղաղութիւնը, իմացնելով, որ ովկիաննոսի  
այն կողմում սկսում է մի նոր պատերազմ  
(Միացեալ-նահանգների և Սպանիայի մէջ),  
այս-այն տեղից լսելի էին լինում բազմաթիւ  
ձայներ, որոնք, կշռելով կարելի և անխուսափելի  
չարիքը, ժամանակակից ընդհարումների հե-  
տեանքը, ճգնում էին այս նոր արհաւիրքի ա-  
ռաջն առնել, կռուող կողմերին առաջարկելով  
իրաւնատիր դատաստան։ Եւ յիրաւի, քաղաքա-  
կան խնդիրների այս տեսալ լուծումը, որի  
օրինակներն ունեցել է մեր քարը, միայն աւե-  
լի բարձրացնել կարող է մեր ժամանակի բա-  
րոյական ձգտումների վարկը։ Բայց և այնպէս,

պատմութիւնը մի անգամ եղ ցոյց տուեց, որ մարդկանց փոխադարձ կոտորածը, հազարաւոր ընտանիքների անբաղանալը գերադասում է բարոյական շահերից:

Դորս փոխանակ՝ Ամենայն Ռուսաց Կայսեր զինաթափութեան հրաւէրը, որ ուղղուեցաւ եւրոպական պետութիւններին, պարզ ապացուցանում է, թէ որքան աճել է այդ մեր խոճի վերայ ծանրացած խնդիրը. իսկ այն արձագանքը, որ նա գտաւ արևմտքում, ժողովրդի զանազան խաւերում, մի գեղեցիկ փաստ է, որ խաղաղութեան ձգումն ընդհանուր է, օրըստօրէ աւելի մեծ ծաւալ և բարյական իրաւունք է ստանում \*):

\*) Պատշաճաւոր ենք համարում այստեղ առաջ բերել այն շրջաբերականը, որով, Բարձրագոյն հրամանաւ, 1898 թուի դեկտ. 30-ին ուսւաց արտաքին գործերի մինիստրը դիմեց օտարազգի ներկայացուցիչներին: Ցիշեցնելով խաղաղութեան կոնֆերենցիայի մասին, որը հրավիրում է ըստ ցանկութեան Կայսեր Ամենայն Ռուսաց, շրջաբերականը թւում է այն կանոնները, որոնք կարող են կազմել նորա գլխաւոր հիմքն ապագայ նիստերում.

1. Համաձայնութիւն կայացնել, որով որոշում է մի յայտնի միջոց պահպանել ցամաքային և ծովային գինուած ոյժերի, որպէս և պատերազմական

Եւ յիրաւի, բաւական է մի թեթև հայեացք ձգել այս շարժման վերայ աշխարհիս երկու կիսագնտերում, որպէս զի ստուգել կարողանանք, թէ որ աստիճան արդէն նա ընդհանրացել է, գրադեցնելով բոլոր լուսաւոր ազգերի ընտիր ներկայացուցիչներին: «Խաղաղութիւն» բառը ոգերուութեամբ է արտասանելում և եկեղեցու բեմից, և պարլամենտական ամբիոնից, նոր նիւթ է մատակարարում հոչակաւոր զրիշներին, վերջապէս իւր մէջ պարունակուով գաղափարի զօրութեամբ ստեղծում է բազմաթիւ «խաղաղութեան ընկերութիւններ», որոնց մասնակցում են կամ նախագահում յայտնի գիտ-

---

կարեաց նախահաշխիների այժմեան շափը. Նախապէս ուսումնասիրել այն միջոցները, որոնց չնորհիւ ապագայում իրագործելի կըլինէր յիշեալ զինուածոյժերի և նախահաշխիների կրծատումն անգամ:

2. Արգելել գործածել զօրքի մէջ նաւատորմիզում որ և է նոր հրազէն և նոր պայթիչ նիւթեր, որպէս և աւելի ներգործիչ զառօպ, քան ընդունուած է ներկայումս հրացանների և թնդանօթների համար:

3. Սահմանափակել զաշտային պատերազմական կործանիչ պայցթուն բաղադրութիւնների գործածութիւնը, որոնք ներկայումս գոյութիւն ունին, որպէս և արգելել օւապարիկներից նետելի գործիքներով կամ սորա նման ուրիշ եղանակով օգտուելը:

հականներ, քաղաքական և հասարակական գործիչներ:

Մանաւանդ զօրեղ է այս շարժումն Ընդլիայում, որտեղ նկատում է եռանդուն և անընդհատ պրոպագանդա ոչ միայն օրբառիք բազմացող ընկերութիւնների կողմից, այլ և մամուլի մէջ, որ ժողովրդի տրամադրութեան ճիշտ յայտարարն է հանդիսանում այս երկրում: Պատերազմի դէմ խիստ արշաւանք են սկսել մի շաբթ լուրջ պարբերական թերթեր և հանդէններ, ինչպէս՝ «Manchester Guardian», «Concord», «Observer de Bradford», «Labour Leader», «Echo» և ուրիշ շատերը: Աւե-

4. Արգելել ծովային պատերազմներում գործածել կործանիչ ջրասոյզ ականակիր նաւակներ, կամ կործանելու նոյն յատկութիւնն ունեցող այլ գործիքներ: Պարտաւորուել ապագայում չկառուցանել պատերազմական նաւեր, զինուած բարձներով:

5. Գործադրել ծովային պատերազմներում 1864 թ. ֆընկեան դաշնապրութեան կանոնները՝ 1868 թուի լրացուցիչ օրէնքների հիման վերայ:

6. Նոյն օրինակ հիմանց վերայ ընդունել այն նաւերի և մակոյների չէզոքութիւնը, որոնց յանձնաբարուած կըլինի ծովային ճակատամարտների ժամանակ և նոցանից յետոյ խեղդուողների փրկութիւնը:

լորդ չենք համարում աւելացնել, որ անգլիական ազգին է պատկանում այս գաղափարի ամենաշընդարձակ ծաւալով ընդհանրացնելու պատիք, որով նախանձելի օրինակ է տալիս նա և միւս ազգերին:

Նոյն երեսյթը նկատելի է, այս կամ այն չափով, նաև եւրոպական ցամաքի գրեթէ բոլոր ազգութիւնների մէջ: Փրանսիայում, չնայելով որ այստեղ միշտ զօրեղ է եղել շովինիզմը (թիւու ազգասիրութիւնը), այնուամենայնիւ այս բարձր ձգտումը կազմակերպել է արդէն համակրողների մի ստուար բանակ, բարիացած յայտնի հեղինակներից և քաղաքական գործիշ-

7. Վերազնել պատերազմական օրէնքների և սովորութիւնների յայտարարութիւնը (déclaration), որը 1874 թուին մշակուած էր Բրիտանիայի համաժողովում և որը մինչև այժմս չէ վաւերացուցած:

8. Ընդունել բարի ծառայութիւնների, միջնորդութեան և կամաւոր իրաւոնակիր քննութեան գործադրութեան սկզբունքը յարմար դէպքերում տէրութիւնների զինուած ընդհարումների առաջն առնելու նպատակով, հաւանութիւն կայացնել այս միջոցների գործադրութեան եղանակի վերաբերմամբ և միակերպ ձև հաստատել նոցա գործածութեան համար:



Ներից \*), որոնք խաղաղութիւնը պահպանելու մէջ են որոնում թէ հայրենիքի հանգստութիւնը, որ խանգարուած է վերջին դէպքերից, թէ առհասարակ քրիստոնեայ աշխարհի բարգաւաճումը: Կարճ միջոցում այստեղ առաջ եկան մի շաբք ընկերութիւններ (La société française pour l'arbitrage entre nations; Ligue de la Paix et de la Liberté; La Paix par le droit; Almanach de la paix pour 1899 և այլն), որոնք անսպառ եռանդով առաջ են տանում խաղաղութեան գործը:

Ընդհանուր շարժումից յետ չէ մնում և իտալիան, որի հիւսիսային քաղաքներից մէկը՝ Տուրինը պէտք է ծառայէ իրրև կեզրոն մի շատ հետաքրքիր ընկերութեան՝ «Ռւսանողական միջազգային համաժողովի» (Congrès international des Etudiants): Այս ընկերութեան կազմակերպողները վճռել են հրատարակել իրանց օրգանը, որ կրում է «Corda fratres»—այսինքըն՝ «սրտերի եղբայրութիւն» մեծիմաստ վերնագիրը:

\*) Բաւական է առաջ բերել հետևեալ հեղինակաւոր անուններ՝ իվ. Գիյո, Սնատոլ Լեռուա—Բոլիէ, Զարլ Բիշէ, Արտուր Դեժարդեն, Գաբրիէլ Մօնօ և այլն:


Խաղաղութեան ընկերութիւնների շվեյցանացնում է նաև Զուիցերիայի, Բելգիայի, Դանիայի, Գերմանիայի, Աւստրիայի, Ռումինիայի միջով համար մինչև Սկանդինավեան թերակղին: Ընդհանուր շարժման մասնակցում են այս բոլոր տեղերում մի շարք յայտնի անձններ, ինչպէս Գէորգ Ստուրծա (Ռումինիա), Պետտեն-կոֆեր, Փօս (Մինչիւն), պետական ժողովների պատգամաւորներ, եպիսկոպոսներ, սենատորներ, բարձր դասակարգի կանայք: Ի միջի այլոց, Աւստրիայում մեծ հոչակ ունի Բարոնեսա Զուտտեներ՝ «Die Waffen nieder» («ի բաց զգէնս») հանդիսի հրատարակուհին:

Ով հետեւ է վերջին քաղաքական անցքերին, պէտք է լաւ յիշէ, թէ ինչ դժուարութիւնների հանդիպեց ամերիկական մեծ հասարակապետութիւնը, նախ քան Սպանիային պատերազմ յայտարարելը: Խաղաղութեան կոչը, որ շարունակ լսում էր նոյն իսկ թնդանօթների որոտումների միջից, չէ լուս և այժմ, այլ աւելի ահաւոր ոյժ է ստանում բազմամարդ միտինգներում, որոնք մի ժամանակ միաձայն դատապարտեցին թիւրքաց բարբարոսութիւնները:

Ցանում զինաթափութեան մաքառում է

1525-2013  
319

ԿԵՐ



վերջապէս մի ընկերութիւն, որ արդէն զրաւել է ընդհանուրի ուշադրութիւնը և որը կոչւում է «Կանանց գանակցութիւն միջազգային զինաթափութեան համար (Ligue des Femmes pour le désarmement international).

Եւ ահա խաղաղութեան ձգտումները համախմբւում են, ստանում պաշտօնական կերպարանը և հեղինակութիւն չապի կոնֆերենցիայում, որտեղ գումարուած են այժմ հողագնուխ գրեթէ բոլոր տէրութիւնների ներկայացուցիչները։ Մրազան գործին տրուած է կանոնաւոր ընթացք, և զարգացած ազգերը սըրտատրով սպասում են, որ վերջապէս արդարութիւնը և մարդկային պատիւը կըվերականգնեն, այսպիսով նոր և մեծ ասպարէզ բաց անելով գալող դարերին։

Բայց դա գործի գեռ սկիզբն է։ Պէտք է յուսալ, որ խաղաղութեան պաշտպանները, մի մեծ եղբայրութիւն գարձած, չեն բաւականանալ միայն զինուտների թիւը պակասեցնելով, եւրոպայի տնտեսական գրութիւնը բարւոքելով, այլ և իրանց հզօր հովանու նեղքոյ կառնեն այն անտերունչ, հարստահարուած ազգութիւններին, որոնց չէ վիճակուած ապրել և յառաջադիմել քաղաքակրթուած ազգերի շարքում, այլ

հոգալ զանէ իրանց կեանքը և ընտանեկան պատիւը պաշտպաններու մասին։ Երբ մարդկային արժանաւորութիւնն աւելի մեծ կշիռ է ստանում մեր ժամանակները, իսկ ժողովրդի կուլտուրական ձգտումը—զնահատութիւն, միջին ընդհանուր մարդկութեան խզնի վերայ ծանր բեռ չի լինի զրկել ամենասարրական մարդկային իրաւունքներից այն քրիստոնեայ ազգութիւններին, որոնք դաւապարտուած են քրիստոնէութիւնը հալածողների լծի տակ ապրել և որոնք ձեռք են կառկառում իրանց գորեղ եղբայրներին՝ աղաչելով պարզեել իրանց կեանքի իրաւոնք։

Այստեղ ևս թափառական փիլիսոփայութիւնը ճգնում է արդարացնել մարդկանց անտարքերութիւնը գէպի օտար ազգերի տառապանքը «քաղաքական» անխուսափելի պատճառներով։ Այս բառը, որ ունէր ազնիւ նշանակութիւն հին յոյնի բերանում, մեր ժամանակ իւր մէջ պարունակում է ոչ այնքան բարձր ձգտումներ, կարծես հեղնելով մեր բարքերը և այն ևս ամենամեծ գիւտերի, մարդկային մաքի սքանչելի ճոխութեան դարում։ Զբաղուել «քաղաքական» խնդիրներով, այսինքն զատել տէրութեան վիճակի և միջազգային փոխադարձ յարաբերու-

թիւնների մասին հայրենասիրութեան գործ էր Աթենացու կամ Սպարտացու համար. «քաղաքագէտ» լինել դէսլի միւս անհատները մեր ժամանակ հաւասար է խմաստութեան ծայրագոյն աստիճանին, ե այդ ձգտումը նոր սերնդի զարգացման զվասւոր դեմքն է կազմում։ Յարմարուել շրջապատող պայմաններին, օգտուել մէկի թուլութեամբ, միւսի թեթևամտութեամբ, ծածկել իւր հոգու ոչնչութիւնը և խարդախութիւնը մի շարք փքուն բառերի և «դիպլոմատի» նուրբ վարմունքի դիմակի տակ, մաքառել, որտեղ հարկաւոր է, յանուն բարձր ճշմարտութիւնների, բնաւ չճանաչելով նոցա իրան մէջ, միշտ և ամեն տեղ պտրելով իւր անձնական շահերը—ահա ճարպիկ «քաղաքագէտի» գործունէութիւնը, որ ցաւօք շատ անդամ ամենաբարձր պաշտօնների է հանում։ Կրօնը, հոգու աղիւ ձգտումները, անկեղծ բարեկամութիւնը, տէրը—դատարկ հնչիւններ են «քաղաքագէտի» համար. նորա բոլոր մտքի ոյժերը, ցանկութիւնները, ամեռող նորա գոյութիւնը կեղոնացած են նորա «ես»-ի մէջ, որ արտաքսում է նորանից այն ամենը, ինչ որ զարդարում և պսակում է մարդու։ «Ճերոսութեան», ինքնառնութեան վեհ գործքերը մերձաւորին փրկե-

լու համար նորա տեսակէտով մարդկային յիմարութեան և կարճամտութեան արգասիրն են (չէ որ նորա «օտարի» օգտին են ծառայում), իսկ նա ինքը, իմաստնից իմաստունը, բոլորովին գոհ է մնում իրանից, իւր երջանկութիւնը շատ անդամ հիմնելով ուրիշի անբախտութեան վերայ։ «Քաղաքագէտ» մարդը, տեսնելով, որ ուժեղը թոյլին ծեծում է, օգնում է աւաշնին, թէպէտե լինի նա մեղաւոր, եթէ նորանից սպասելիք ունի։

Գրականութիւնը միշտ եղել է և կըլինի մարդկային կեանքի աշքի ընկնող երևոյթների ճիշտ հայելին և թանկագին լիշատակարանը պատմութեան որոշ շրջանում։ Այն գարշելի երևոյթները, որ նկատելի են ժամանակակից զրականութեան մէջ, իրաւամբ կարող էլին տեղիք տալ մարդկային ցեղի մասին ամենաստոր զաղափարը կազմելու, եթէ նոքա բարեբախտաբար շլնէին բացառիկ և բթացած մտքի արգասիք։ Մի քանի հեղինակներ — և լուրջ հեղինակներ — առանց քաշուելու սկսում են քարոզել մարդուս զգացմունքների լիովին անսանձութիւնը և ամենաբարձր իդէալ համարել եսականութիւնը, որ ոչ մի բարոյական օրէնքներով չէ զսպուած, անդելով՝ թէ սա է

ամեն մի անհատի ձգտումների ամենախելօք  
և վերջին նպատակը: Ում արդեօք յայտնի  
չեն Մ. Զտիրների, Փր. Նիցէի, չ. Իբսենի  
անունները, որոնք ստեղծել են մի ամբողջ  
գրականութիւն, նուիրելով իրանց գրչի բոլոր  
հանճարը անձնաւուրութեան պաշտամունքին  
և բացէ ի բաց հրաժարուելով տեսնել մար-  
դուս մէջ որ և է բարոյական սկզբունք: «Իմ  
ինքնազունութիւնը», ասում է այս հռչակաւոր  
իմաստուններից առաջինը, «խանգարում և  
թունարուում է նորանով միայն, որ ես ինձ  
պարտական եմ համարում այս կամ այն անե-  
լու, որ ես անհրաժեշտ եմ տեսնում ուրիշին  
որ և է ծառայութիւն մատոցանելու, որ ես  
ինձ երթեմն կոչուած եմ համարում ուրիշների  
համար մի բան գոհելու կամ մի բանից հրա-  
ժարուելու յօգուտ նոցա» \*): Խորին փիլիսո-  
փայութիւնը այս «մտքի մշակներին» հասցնում  
է այնտեղ, մինչ նորա ժխտում են ոչ միայն  
որ և է օրէնքներ, որոնք անհրաժեշտ են մարդ-  
կանց փոխադարձ յարաբերութիւնների համար,  
այլ ճշմարտութիւնների գոյութիւնն իսկ: «Ճշ-  
մարտութիւնները», ասում է Զտիրները, «միայն  
նախադասութիւններ («ֆրազներ») են, ոճեր,

\*) «Միայնակը և նորա սեպհականութիւնը»:

բառեր: Այսպէս թէ այնպէս կապուած, այս-  
պէս թէ այնպէս դասաւորուած և միացած  
նորա տալիս են այն, ինչ որ կոչում են տրամա-  
բանութիւն, գիտութիւն, փիլիսոփայութիւն»:  
Միւս տիրահաշակ իմաստունը՝ Փր. Նիցէ՝ ա-  
ւելի ևս խորը գնալով, մի մեծ գիւտ է անում,  
պնդելով, որ ազատ մարդու համար կատա-  
րեալ բերկրանք է անգլութիւն գործել: «Հա-  
ճելի է գուարճանալ շարչարանքի տեսարանով»,  
բացականչում է նա, բայց առաւել ևս հաճելի  
է ուրիշներին չարչարել»: Մնում է այս պատ-  
կառելի փիլիսոփայի ձեռքը տալ դանակ, որ  
խրէ նորան առաջին պատահողի կուրծքը և  
հրճուի նորա մահուան կոիւր տեսնելով: Երեկի,  
Ներոնի ոգին կրկին յարութիւն է առնում մեր  
ժամանակ, թէպէտե գրչով զինուած, որպէս  
զի մի անգամ ևս զարհուրեցնէ մարդկային  
ցեղը իւր գաղանային այլանդակութեամբ.

Ըրդէն ակնյայտ է, թէ ո՞րքան բարձր  
պէտք է լինի այսպիսի «քաղաքագէտի» հա-  
յեացքը մարդկանց ընկերութեան վերայ, որոնք  
մերձենում են միմիշանց հետ փոխադարձ բա-  
րորութեան համար. նորա նորա աշքում միայն  
հասարակ գործիքներ են հանդիսանում իւր  
ընտրած նպատակներին ծառայեցնելու համար:

Եւ յիրաւի, ինչ «հաշիւ» է «եսասէր» մարդու համար մտնել նոցա դրութեան մէջ, աջակցել նոցա վիճակը բարւոքելու, մխիթարել վշտի ժամանակ, օգնել նեղութեան մէջ՝ նա մերձենում է նոցա հետ միայն այնչափ, որչափ որ պահանջում են նորա անձնական շահերը: Նորա մէջ խօսում է միշտ խելքի ստորին աստիճանը, խեղելով սրտի մաքուր ձայնը. անսամնական «ես»-ը ծածկում և փակում է նորա հոգու բոլոր լուսաւոր կողմերը:

Ճշմարիտ է, ամեն մի անհատին յատուկ է իւր կեանքի պայմանները բարւոքելու, քանի որ աշխարհս լայն ասպարէզ է բաց անում մարդկութեան մեծ ընտանիքին, բոլորին հաւասարապէս առաջարկելով իւր ճոխ բարիքը վայելելու: Այս ձգտութը միևնոյն ժամանակ ընական է, քանի որ մարդս զգում է իրան հողեղին արարած, որ բաղկացած է մսից և արիւնից, իւր որոշ ֆիդիքական պահանջներով, սաստիկ զարգացած նեարդային համակարգութեամբ (système), որ մարդուս մարմնին որոշ զգացմոններ է մատակարարում: Հարկաւ խելքը—մեծ և հզօր զէնք է հանդիսանում մարդուս ձեռքում կեանքի միջոցներ պտրելիս: Այսպէս ուրեմն եսականութիւնը

(égoïsme) — բնական և ամենահասկանալի զգացմոններն է, որ ապրում է ամեն մի անհատի մէջ և մեռնում նորա հետ միասին. չէ որ բոլոր երեխաները — մեծ եսասէրներ են: Բայց միթէ սորանումն է միայն մարդուս գոյութեան բոլոր խորհուրդը: Սահմանափակումն է արդեօք նորա կոչումը միայն իւր մարմնի ֆիդիքական պահանջներին գոհացում տալով, իրան «կշտացնելով»: Մեծ զանագանութիւն նա չէր դնէ իւր և անհատունի մէջ, եթէ իւր վերայ նայէր միայն այդ ստոր տեսակտով: Հնատանիքի, հասարակութեան, տէրութեան գոյութիւնը ամենազեղեցիկ ապացոյցն է, որ մարդիկ ձգտում են հաշտեցնել իրանց շահերը ընդհանուր օգտի համար: Սա միայն բնական դրզումն չէ (որ նկատելի է անհատունների մէջ), այլ և հոգեւոր փոխադարձ հակումն, որ բարձրացնում և ազնուացնում է մարդուս բնութիւնը: Ուկեմն այս վեհ, հոգեւոր աղբիւրը, որ անվերջ բվիսում է մարդուս մէջ, ծնում է բարոյական պարտականութեան գաղափարը, որով նա կապւում է իւր ընտանիքի, ապա հասարակութեան և վերջապէս տէրութեան հետ:

Բայց այս իդէալները դեռ հին աշխարհին

Էին պատկանում, երբ մարդկային արժանաւորութիւնը գեռ չէր ճանաչուած, երբ յաղթուած ազգերը ստրկութեան էին դատապարտուած. իսկ նոր աշխարհին վլրակուել էր ունենալ այն Սստուածային առաջնորդը, որ ձուլեց և բարոյապէս վերանորոգեց մարդկային ցեղը իւր սքանչելի ուսմամբ: Նա խորտակեց ազգային նախապաշարմունքների պատնէները, քարոզերով մարդկանց սիրել միմեանց ոչ իրեն իւր ընտանիքի, իւր հասարակութեան, իւր ազգի անդամին, այլ իրեն իրան նմանին և հաւասարին:

Եթէ քրիստոնէութիւնը խաչուեցաւ իւր ծննդատեղում, հալածուեցաւ բարբարոս ազգերից, սխալ մեկնութիւն ստացաւ միջին դարերում, այժմ գոնէ պէտք է վերջապէս բազմի իւր գահի վերայ և արդար դատաստանը անէ: Բայց տես թէ «քաղաքականութիւնը» այսինքն «հաշիւը» ինչ տեսակ չարիք է առաջ բերում գանազան ազգերի, ոչ միայն անհատների, յարաբերութիւնների մէջ: Յանուն քաղաքականութեան յայտարարուում է պատերազմ, և հարիւր հազարաւոր մարդիկ զոհ են գնում անմեղ տեղը. յանուն քաղաքականութեան հզօր ազգերը սառնասրտութեամբ նայում են, թէ ինչպէս

թոյլ, անպաշտպան ազգերն արեան մէջ լողում են և ջնջում երկրի երեսից: Բայց ազգային զգացմոնքը բռնկում է, յուզումն իսկոյն տարածում երկրի մի ծայրից միւսը, երբ լուր է ստացւում ցեղակցին օտար տէրութեան մէջ հասուցած անպատճութեան մասին՝ շտապով շարում են ապա զօրքերը, վուղիողում դրօշակները և ժողովրդի բռւռն աղաղակները թնդեցնում են օդը, իսկ ծովի ալիքները ծըփում խրոխտ զրահակիրների ծանրութեան տակ:

Ուր է տանում այս մրցումը: Հրաշալի արձան կանգնեցնելով մարդկային մտքի զարգացման՝ գիտութեան, գրականութեան, արուեստի, հասարակական կեանքի ասպարէզներում, միենոյն ժամանակ ազգերի յարաբերութիւնների մէջ ստեղծում է նա այնպիսի խոչընդոտներ, որոնք յետ են մղում պատմութեան անիւրը: Նայեցէք մեր ժամանակի գործարաններին և արհեստանոցներին, որոնց մէջ մարդկային հնարագէտ խելքը կատարելագործում է ամենայն տեսակ գործիքներ՝ մարդկային ցեղը ոչնչացնելու համար՝ ձուլում են ահազմն թնդանօթներ, անհամար քանակութեամբ պատրաստում հեռագիւ հրացաններ, անծուխ, անձայն վառօդ,

դինամիտ, մելինիտ և այդպէս հազար ու մի անոնմներով պայթիչ նիւթեր, մէկը միւսից աւելի սոսկալի և կործանիչ։ Ճովիրն ամենուրեք ծածկուած են այս այն կողմ ընթացող դրահով պատած պատերազմական նաւերով, որոնք ընդունակ են մի քանի ժամում ամբողջ ծովեղրեայ քաղաքներ փլատակ դարձնելու։

Նայեցէք Եւրոպայի մատաղ սերնդի կըրթութեան, որ գեռ մանկութիւնից սովորեցնում են սիրել միայն այն, ինչ որ հարազատ է, և ատել այն ամենն, ինչ որ օտար է, պարծենալով իրանց նախնիքներով, որոնք միշտ էլ չեն եղել կուտուրական ձգտումներով ոգեսրուած, այլ շատ անզամ թաթախուած մարդկային արեան մէջ։

Նայեցէք ժամանակակից բիւրաւոր պարբերական հրատարակութիւններին, որոնք յանուն հայրենասիրութեան ատելութիւն են սերմանում ժողովրդի մէջ դէպի տարբեր կրօն, տարբեր լեզու ունեցող աղքերը։

Բազմաթիւ են այնպիսի թերթեր, որոնք հաղորդում են հարուստ տեղեկութիւններ սեպհական հայրենիքի մասին, բայց խիստ հազուագիւտ այնպիսիները, որոնք մասնապիտաբար ծանօթացնէին օտար աղքերի կեանքի և բարբերի հետ։

Բազմաթիւ են այնպիսի հոգեոր պաշտօնեաներ, որոնք ամենայն ճտութեամբ, մինչև անզամ մանրամանութեամբ կատարում են իրանց պաշտօնը սուրբ սեպանի առաջ, բայց քանի են այնպիսիները, որոնք քարոզում են ժողովրդին յարգել օտարների հաւատը, այն ազգերի, որոնք գնում են իրանց հայրերի շաւզով և կրում իրանց վերայ պատմութեան կընիքը։


Մենք, լուսաւոր աղքերս, ունենք եկեղեցներ, պատկերներ, ոսկեզօծ սրբազն անօթներ, բայց մեր մէջ չենք կրում ճշմարիտ հաւատ դէպի մարդկային արժանաւորութիւնը։ Մենք մաքրում ենք մեր հոգին աղօթքով, պասով, սուրբ գրքերի ընթերցանութեամբ, բայց սրտատրով ուրախութեամբ ականջ ենք զնում թնդանօթների որոտին, յավթուածների յուսահատական ճշին կամ կոյր ենք ձեանում հազարաւոր մերկ, անտուն քրիստոնեայ եղբայրների վէրքերը տեսնելիս, որոնք գոհ են գնում անօթէնների բարբարոսութեանը։

Ահա թէ ինչո՞ւ բոլոր բարիքներից աւելի խաղաղութիւն է կտակում վախճանող դարն ապագայ սեմնդին, որի վերայ ծանրացած է նորա դրօշակը բարձրացնելու բարոյական

պարտքը: Եւ այդ սերունդն ունի իւր անսխալ առաջնորդը: Արդէն ժամանակ է, որ քրիստոնէութիւնը հասկացուի ոչ իրրի լոկ ձևականութիւն, եկեղեցական պաշտամունք, աղօթք և ծնրագրութիւն, այլ իրքի աշխարհը բարոյավէս նորոգող մի զօրութիւն, որի կոչումն է ջնջել կամ աշխատել ջնջել տեսանելի շարիքը, ներդաշնակութիւն մտցնել մեր յարաբերութիւնների մէջ և ի մի համախմբել մարդկային ցեղը՝ մի բուռն ձգտումով դէպի առարինութիւն: Քրիստոնէական ուսումը, լինելով եւրոպական քաղաքակրթութեան զլիսաւոր հիմքերից մէկը, այժմ լայն ճանապարհ է ցոյց տալիս պատմութեանը՝ դէպի առելի բարւոք ժամանակներ, դէպի համաշխարհային խաղաղ բարգաւաճում: Ճշմարիտ է, այս բարձր տեսութիւնը դժուար իրագործելի է իրականութեան մէջ, բայց բաւականանալ այս պատճառաբանութիւնով՝ նշանակում է յիտ կենալ այն իդէալներից, որոնք ազնուացնում են մարդկային բնութիւնը:

Ի՞նչ է զլիսաւոր խոչընդուռ՝ ազգային կեղծ հպարտութեան ոգին, սուստ ազգասիրական նախապաշարմունքներ, որոնք կաշկանդում են մարդկային լայն գաղափարները: Երբ նոքա

վերանան, վերանայ ցեղական փոխադարձ ատելութիւնը, երբ յանուն մարդկութեան շահերի մեղմանան հզօր ազգերի նեղեսական ձբդտումները, այն ժամանակ միայն կըլուէ պատերազմի ահաւոր աղմուկը և անմեղ գոհերի արիւնը չի ողողի եղբայրութեան, արդարութեան և ճշմարտութեան սուրբ սեղանները:





Դպրության Ազգային գրադարան



NL0427184

